ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» 2008թ. գործունեության հաշվետվություն

ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամը» գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 2007թ. օգոստոսի 20-ին (գրանցման համար 222.160.00785, վկայականի համար 03Ա076995): Գտնվելու վայրն է՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: Հիմնադրամի հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան է:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը կազմված է 7 հոգուց. համանախագահներ՝ Ռ.Մարտիրոսյան և Ա.Աբրահամյան, խորհրդի անդամներ՝ Ս.Համբարձումյան, Գ.Ծառուկյան, Գ.Ղազինյան, Հ.Սարաֆյան, Ե.Ազատյան:

Հիմնադրամը հետապնդում է գիտական, գիտակրթական, սոցիալական, բարեգործական, բնապահպանական և այլ հանրօգուտ նպատակներ: Հիմնադրամի ֆինանսները առաջանում են բարերարների նվիրատվություններից: Բարերարները կարող են լինել ինչպես կազմակերպություններ, այնպես էլ անհատ անձինք: 2008թ. ընթացքում հիմնադրամը ստացել է 1270 հ. (մեկ միլիոն յոթանասուն հազար) դրամի, 2500 հ. (երկու միլիոն հինգ հարյուր հազար) Ռ.Ռ և 9993 (ինը հազար ինը հարյուր իննսուներեք) ԱՄՆ դոլարի նվիրատվություն: Տոկոսներից ստացվել է 4870 հ. (չորս միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) դրամի եկամուտ:

2007թ. ընթացքում կատարվել է ընդամենը 23135.9 հ. (քսաներեք միլիոն հարյուր երեսունհինգ հազար ինը հարյուր) դրամի ծախսեր, որից 4909.7 հ. (չորս միլիոն ինը հարյուր ինը հազար յոթ հարյուր) դրամը վարչակառավարչական ծախսեր են, այդ թվում 2645.0 հ. (երկու միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար) դրամը հաշվարկվել է աշխատավարձ, 521.3 (հինգ հարյուր քսանմեկ հազար երեք հարյուր) դրամը հատկացվել է սոցիալական ապահովության ֆոնդին, իսկ 18202.7 հ. (տասնութ միլիոն երկու հարյուր երկու հազար յոթ հարյուր) դրամը կանոնադրությամբ նախատեսված նպատակներով:

Հոգաբարձուների խորհրդի անդամները չեն օգտվել հիմնադրամի միջոցներից: Հիմնադրամի միջոցներից տրվել է աշխատավարձ տնօրենին՝ Հ.Մաթևոսյանին 1393.1 հ. (մեկ միլիոն երեք հարյուր իննսուն երեք հազար) դրամ, հաշվապահին՝ Լ.Առուստամյանին 696.1 հ. (վեց հարյուր իննսունվեց հազար հարյուր) դրամ, գործավարին՝ Մ.Մանուկյանին՝ 556.8 հ. (հինգ հարյուր հիսունվեց հազար ութ հարյուր) դրամ:

ՀՀ ԳԱԱ ԳԶՀ տնօրեն (Հ.Մաթևոսյան)

Գլխավոր հաշվապահ (Լ.Առուստամյան)